

RESTART ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ՝ RESTART ՓԱԹԵԹ

Restart վերաֆինանսավորման վարկի շրջանակներում, մինչև 31/12/2025թ. վարկի ստացման դիմում ներկայացնելու և վարկը տրամադրվելու պարագայում, Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի դեպքում՝ տնօրենին և մասնակիցներին/բաժնետերերին, ինչպես նաև Անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդին (ֆիզիկական անձին) առաջարկել ստորև պրոդուկտները արտոնյալ պայմաններով՝ կախված վարկի գումարի մեծությունից.

1. 300-400 մլն վարկի գումարի դեպքում (ներառյալ լրացուցիչ վարկի գումարը).

- ✓ Mastercard World Elite/Visa Infinite վճարային քարտ՝ ողջ ժամկետի համար առանց տարեկան սպասարկման վճարի,
- ✓ Քարտային վարկային գծի հնարավորություն՝ մինչև 5 մլն ՀՀ դրամ սահմանաչափով, 15% տարեկան անվանական տոկոսադրույքով (տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 15.40%-16%), 12-60 ամիս ժամկետով,
- ✓ 1 հատ պահատուփ՝ փոքր, միջին կամ մեծ չափի, 30 օր ժամկետով, առանց վարձակալության վճարի, կարող է օգտագործվել վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

2. 150-300 մլն վարկի գումարի դեպքում (ներառյալ լրացուցիչ վարկի գումարը).

- ✓ Mastercard World վճարային քարտ՝ ողջ ժամկետի համար առանց տարեկան սպասարկման վճարի,
- ✓ Քարտային վարկային գծի հնարավորություն՝ մինչև 3 մլն ՀՀ դրամ սահմանաչափով, 16% տարեկան անվանական տոկոսադրույքով (տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 16.50%-17.10%), 12-60 ամիս ժամկետով
- ✓ 1 հատ պահատուփ՝ փոքր կամ միջին չափի, 30 օր ժամկետով, առանց վարձակալության վճարի, կարող է օգտագործվել վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

3. 50-150 մլն վարկի գումարի դեպքում (ներառյալ լրացուցիչ վարկի գումարը).

- ✓ Mastercard World վճարային քարտ՝ ողջ ժամկետի համար առանց տարեկան սպասարկման վճարի,
- ✓ Քարտային վարկային գծի հնարավորություն՝ մինչև 3 մլն ՀՀ դրամ սահմանաչափով, 17% տարեկան անվանական տոկոսադրույքով (տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 17.60%-18.20%), 12-60 ամիս ժամկետով,
- ✓ 1 հատ պահատուփ, փոքր չափի, 30 օր ժամկետով, առանց վարձակալության վճարի, կարող է օգտագործվել վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ընդ որում սույն պայմանների համաձայն վարկային գծերի և պրոդուկտների տրամադրումից հետո, բիզնես վարկի վաղաժամկետ ամբողջական մարման պարագայում, Բանկն իրավունք ունի իրականացնել սույն առաջարկի համաձայն սահմանված պրոդուկտների տրամադրման պայմանների միակողմանի փոփոխություն՝ համաձայն տվյալ պահին տվյալ պրոդուկտի տեղեկատվական ամփոփագրի համաձայն գործող պայմաններին:

2. Անկախ Restart վերաֆինանսավորման արշավի շրջանակներում տրամադրվող բիզնես վարկերի քանակից, Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում՝ տնօրենը և մասնակիցները/բաժնետերերը, իսկ Անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի դեպքում՝ ֆիզիկական անձը, սույն առաջարկից կարող են օգտվել միայն 1 անգամ:

3. Այն պայմանները, որոնք սահմանված չեն սույն փաստաթղթի համաձայն, կարգավորվում են համաձայն տվյալ պրոդուկտի տեղեկատվական ամփոփագրի.

- ✓ Պահատուկների տրամադրման պայմանները՝ [հղումով](#): Պահատուկները ենթակա են տրամադրման տվյալ պահին ազատ պահատուկի հասանելիության դեպքում,
- ✓ Վարկային գծի պայմանները՝ [հղումով](#),
- ✓ Վճարային քարտի պայմանները՝ [հղումով](#):